

**ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՈՐԲ ԵՐԵՆԱՆԵՐԻ ԽՆԱՍՔԻ ԽՆԴԻՐԸ (1918-1920 թթ.)**

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Վ.

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո ծագած արտաքին քաղաքական խնդիրները և սահմանային վեճերը հարևան հանրապետությունների հետ ուղղակիորեն անդրադարձան երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Երևանում լույս տեսնող «Լրաբեր» թերթը գրում էր. «Ոչ մի հայ քաղաքական գործիչ կամ կազմակերպություն չէր կարող երևակայել, որ իր ժողովրդի ճակատագիրը կարող է այսպիսի չարափոխության ենթարկվել... Կտրել լայնատարած երկրամասից աշխարհագրական, ազգագրական և տնտեսական կյանքով կապված նահանգներ և ...հաղորդակցության միջոցներին այնպիսի այլանդակ ձև տալ, որ Թիֆլիսից Երևան գնալու համար ստիպված լինեն 3 պետությունների սահման անցնել...ատիկա հեզանք է արդարև»<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետությունը չէր կարող կերակրել անգամ իր բնիկ ազգաբնակչությանը, ուր մնաց 100 հազարի հասնող գաղթականությանը: Թուրքերը չէին շտապում կատարել անգամ Բաթումի հաշտության պայմանագիրը (1918 թ. հունիս) և պահում էին Բաթումով նախատեսված սահմաններից դուրս գտնվող տարածքները ևս: Թուրքական տիրապետության տակ էին մնացել Արդահանը, Կարսը, Կաղզվանը, Ախալցխան, Ախալքալաքը, Ալեքսանդրապոլը, Սարդարապատը, Թալինը, Սուրմալուն և մշտապես թալանվում էին: Բացի թալանից, թուրքերը սպանում և այլ վնասներ էին պատճառում հայ ազգաբնակչությանը: Ղամարլուի շրջանից հեռանալուց առաջ թուրքերը գինու և դռաբի կարասների մեջ շների և մարդկանց դիակներ էին զցել, որի հետևանքով մեծ թվով մարդիկ էին մահացել: Իսկ որբանոցում, որտեղ 76 երեխա էր խնամվում, թունավորել էին այնուրը՝ շատերի մահվան պատճառ դառնալով:

Գրավելով հացառատ շրջաններ Սարդարապատը, Էջմիածինը, Շիրակը՝ թուրքերը հավաքել էին ամբողջ հացը և փոխադրել Թուրքիա<sup>2</sup>: Նրանք իրենց հետ տանում էին նաև այլ մթերքներ ու ապրանքներ, շարժական գույքը, անգամ պատուհաններ, դռներ և տանիքներ: Այդ կապակցությամբ Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի դեսպանի խորհրդականը 1918 թ. օգոստոսի 4-ի գրության մեջ նշում է. «Գրեթե բոլոր արտադրունակ մարզերն այժմ զբաղված են և թալանվում են թուրքերի կողմից: Նրանք հատկապես արտահանում են բամբակի մեծ պաշարներ»<sup>3</sup>:

Ստեղծված դրությունը փրկելու ակնկալիքով նույն թվականին Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսը դիմում է Ավստրո-Հունգա-

<sup>1</sup> *Լրաբեր*, 24.VI.1918:

<sup>2</sup> **Զալխուշյան Գ.**, *Կարմիր գիրք*, Ռոստով, 1919, էջ 178-179:

<sup>3</sup> **Օհանջանյան Ա.**, 1915 թ. *Անհերքելի վկայություններ*, Ե., 1997, էջ 167:

րիայի կայսր Կարլին, որտեղ պարզորոշ ներկայացնում է Հայաստանի վիճակը. «Պատերազմը հատկապես ծանր հետևանքներ ունի հայ ժողովրդի համար: Թուրքական Հայաստանի բոլոր մարզերում վերացել է հայ ազգաբնակչությունը: Նրա մեծագույն հատվածը կոտորվել է Թուրքահայաստանում կամ զոհվել ամենատարբեր զրբկանքների պատճառով: Կենդանի մնացածները ապաստան են փրկությունում նորաստեղծ անկախ Հայաստանում և հարևան մարզերում: Թուրքերը տիրացել են արտագաղթած հայերի ունեցվածքին, ներառյալ բերքը... Բազմապատիկ փոքրացած նորաստեղծ Հայաստանը ի վիճակի չէ օթևան և սնունդ տալու բազմաթիվ փախստականներին»<sup>4</sup>: Ամբողջ 1918 թ. ընթացքում և 1919 թ. անընդհատ քայքայվում էր Հայաստանի սահմանների մեջ մտնող շրջանների տրնտեսական կյանքը: Արյունալի դեպքերի հետևանքով Երևանի նահանգի և Կարսի շրջանի ամենահացառատ գավառների գյուղական ազգաբնակչությունը ստիպված էր դադարեցնել ցանքը և թողնել իր հայրենի վայրերը: Թուրքերի նահանջը և փախստականների վերադարձը իրենց գյուղեր այնքան էր ձգձգվել, որ աշնանացանի ժամանակն անցել էր: Իսկ վերադարձող բնակչությունը չունեի ոչ սերմացու, ոչ գյուղատնտեսական գործիքներ, ոչ կենդանիներ: Այդ պատճառով, Մուրմալուի գավառում, Մարդարապատի և Էջմիածնի շրջաններում և Երևանի գավառի հարավային մասում 1918 թ. աշնանացան կամ չեղավ, կամ էլ խիստ աննշան էր: Այս ամենի անմիջական հետևանքն այն էր, որ միայն Մուրմալուում, որտեղ հայերի թիվը 32.000 էր, ողջ մնացին 17.000-ը, իսկ 15.000-ը մահացան քաղցից և տարափոխիկ հիվանդություններից<sup>5</sup>: Գ. Զալխուշյանին ուղղած նամակում Ալ. Խատիսյանը գրում է. «Մովը Էջմիածնի և Մուրմալուի գավառներում այն աստիճանի է հասել, որ մարդիկ ուտում են գոմաղբ, դիակ, լեշ»<sup>6</sup>:

Հայաստանի նորահռչակ կառավարությունը իր գործունեությունը սկսեց նման պայմաններում և գիտակցում էր, որ օտար սահմաններից իր տարածք ներմուծել ոչինչ չի կարող՝ նախ, այն պատճառով, որ հաղորդակցության միջոցներ չկան հարևան պետությունների հետ և, երկրորդ, անիմաստ էր օգնություն խնդրել անկախ Վրաստանից կամ Ադրբեջանից<sup>7</sup>: Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին իր առջև ծագած խնդիրների մասին, գրում է. «Չորս տարի տևող պատերազմը, մեծ հեղափոխությունը, ռուսական զորքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրության տարրալուծումը, պատերազմական ճակատում կրած մեր պարտությունները, տերիտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետությունների՝ այս խորին ցնցումները չէին կարող չթողնել իրենց հետևից ահռելի հետքեր: Տնտեսական

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>5</sup> *Սոցիալ-հեղափոխական, 4.IX.1919:*

<sup>6</sup> *Զալխուշյան Գ., նշվ. աշխ., էջ 179:*

<sup>7</sup> *Բանվոր, 25.VIII.1918:*

կյանքի և ֆինանսական դրության կատարյալ քայքայում, դադարում ապրանքների արդյունաբերության և փոխանակության, զինամթերքի ծայր աստիճանի պակասություն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայություն կամ սուսկալի թանկություն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցության դադարում, երթևեկության ուրիշ միջոցների պակասություն, ապա հարյուր հազարներով հաշվվող անտուն և անսնունդ գաղթականություն, անապահով կացություն սահմանների վրա և որպես անխուսափելի հետևանք այս բոլորի՝ անիշխանություն: Ահա թե ինչպիսի ծանր պայմանների մեջ է կանչվել իմ կառավարությունը»<sup>8</sup>:

Դրսից պաշտպանություն, ապրուստի միջոց, դրամական օժանդակություն չկար: Ամեն ինչ պետք է արվեր սեփական ուժերով: Դրությունը գնալով ծանրանում էր: Մինչև հոկտեմբեր ամիսը սպառվել էին Հայաստանում գտնվող հացի պաշարները: Պետական և հասարակական ամբարները դատարկ էին: Նույնիսկ դեռ 1914 թ. նույն այն տարածքը, որ արդեն կոչվում էր Հայաստան և ուներ 5- 6 անգամ պակաս ազգաբնակչություն, յուրաքանչյուր տարի հյուսիսից ներմուծում էր 1.1 և 1.5 հազար վագոն ցորեն և այլուր:

Խորհրդարանի 1918 թ. հունիսի 17-ի որոշմամբ, հացը դարձավ պետական մենաշնորհ, որի նպատակն էր՝ 1. հացը կենտրոնացնել պետության ձեռքում, 2. կանոնավոր և ուղիղ բաշխումով 5-6 ամիս կերակրել զորքին և բնակչությանը, 3. թույլ չտալ «սպեկուլյանտներին» գործել, 4. հաստատել ցորենի կայուն գին<sup>9</sup>:

Անմիաթար կացություն էր ստեղծվել հատկապես Խնամատարության նախարարության ենթակա հիմնարկություններում՝ որբանոցներում, հիվանդանոցներում և այլն: Նոր Բայազետի որբանոցների մասին «Աշխատանք» թերթում կարդում ենք. «Քաղաքի որբանոցների ցերեկվա ճաշը խիստ անբավարար է, 3 ամիս ի վեր երեկոները երեխաները կմնան առանց հացի: Անոթությունից մահացած են շատերը»<sup>10</sup>: Իսկ Քանաքեռի պետական որբանոցում անորակ հացի պատճառով երեխաների շրջանում տարածվում է ցինգա հիվանդությունը<sup>11</sup>: Ղարաքիլիսայի որբանոցի գլխավոր հսկիչի զեկույցից իմանում ենք, որ որբանոցի համար, որտեղ 175 երեխա էր խնամվում, ոչ մի կոպեկ չէր հատկացվել<sup>12</sup>: Արագ տեմպերով աճող թանկությունների պատճառով չէր հաջողվում իրագործել նախարարության կողմից որբանոցների համար կազմված նախահաշիվները: Այն, ինչ նախահաշվով ենթադրվում էր ձեռք բերել 1 ռուբլով, ձեռք էր բերվում 10-20 ռուբլով:

Եթե 1919 թ. ցորենի փութն արժեր 300 ռ., ապա 1920 թ.՝ 1300 ռ., պանրի 100 գրամը 1919 թ. արժեր 650 ռ., 1920 թ.՝ 1000 ռ., կարագինը համապատասխանաբար՝ 2000 և 20.000 ռ.: Կառավարությունը ստիպված էր պարբերաբար ավելացնել որբանոցներում խնամվող

<sup>8</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 195:

<sup>9</sup> Խոսք, 12.X.1918:

<sup>10</sup> Աշխատանք, 11.XI.1918:

<sup>11</sup> Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 205, ց. 1, գ. 616, թ. 117:

<sup>12</sup> Նույն տեղում, գ. 847, թ. 39:

երեխաների ամսական նպաստները: Եթե 1918 թ. սկզբին նախատեսված էր ընդամենը 70 ռ., ապա 1918 թ. հոկտեմբերին 150 ռ., իսկ հետո նաև 240 ռ.<sup>13</sup>: Սակայն միայն գումարներն ավելացնելով՝ հարցը լուծում չէր ստանում այն պարզ պատճառով, որ Հայաստանում ապրանք չկար: Իսկ դրամը գնալով արժեզրկվում էր, 8 ամսվա ընթացքում՝ 50 անգամից ավելի: Պետական ծախսերը գերազանցում էին եկամուտները: 1919 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1920 թ. հունվարի 1-ը պետական գանձարանն ունեցել է 30 մլն մուսք և 300 մլն ծախս<sup>14</sup>:

Օրեցօր աճող գների և որպես հետևանք՝ երկրում աննախադեպ չարաշահումների դեմն առնելու նպատակով պետությունը ստիպված էր վերահսկողությունը մեծացնել և շուկայի առավելագույն գներ սահմանել, որոնց չարաշահումը պատժվելու էր քրեորեն: Քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածը սահմանում էր՝ «Ով կթաքցնի ապրանքները արհեստականորեն բարձրացնելու համար կամ կվաճառի չափազանց բարձր գներով, նա կենթարկվի 1 տարվա բանտարկությունից մինչև մահապատիժ»<sup>15</sup>: Այս միջոցառումներն, անկասկած, իրենց դրական դերն ունեցան երկրի սոցիալ-տնտեսական կյանքի տխուր պատկերը մասամբ փոխելու և զարգացման բնականոն հունի մեջ դնելու համար, սակայն առանց արտաքին միջամտության և օգնության այլևս որևէ բան փոխել գրեթե անհնար էր: Կառավարության համար չափազանց դժվար էր երկրի տնտեսական նման պայամաններում որբանոցների հետագա պահպանումը, առավել ևս դրանց քանակի ավելացումը, մինչդեռ հազարավոր որբ երեխաներ շարունակում էին մնալ անխնամ և անօթևան: Հարկավոր էր փրկել նաև նրանց: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարենավորման, հագուստի, դեղորայքի և հիվանդանոցային տարբեր պարագաների լիակատար բացակայությունը հանրապետությունում անմխիթար կացության մեջ էր գցել Խնամատարության նախարարության ենթակա հիմնարկությունները, այդ թվում՝ որբանոցները և ընդհանրապես փախստականների օգնության ամբողջ գործը՝ նախարարությունը դիմում է նախարարների խորհրդի նախագահ Հովհաննես Քաջազունուն՝ իր ներկայացուցիչ բժիշկ Միքայել Մանդինյանին Եվրոպա և ԱՄՆ գնացող կառավարական հանձնախմբի մեջ ընդգրկելու խնդրանքով<sup>16</sup>:

Կառավարական հանձնախմբի ղեկավար Ավետիս Ահարոնյանը ամերիկահայությանն ուղղած իր կոչում ներկայացնելով հանրապետության ազգաբնակչության աղետալի վիճակը՝ նշում էր... «Հայրենակիցներ, ձմեռը մոտենում է, և նա կատարյալ արհավիրք է բերում առանց այն էլ անիրավված և աղետված հայ ժողովրդին, որը ստիպված է մի կողմից պայքարել թուրք-թաթարական խուժանի դեմ 4 ճակատով, մյուս կողմից՝ նյութական ամեն տեսակ կարիքի դեմ:

<sup>13</sup> Նույն տեղում, ֆ. 57, ց. 1, գ. 254, թ. 35:

<sup>14</sup> Չալխուշյան Գ., *Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին*, Վիեննա, 1923, էջ 12:

<sup>15</sup> *Հասար.* 8. VIII. 1920:

<sup>16</sup> *ՀԱԱ*, ֆ. 199, ց. 1, գ. 33, 1-ին մաս, թ. 36:

Մեր գործը գրեթե կիսամերկ ու ոտաբոբիկ է կուրծք տալիս թըշմանամուն... մեր որբերից շատ քչերն են պատսպարված, մնացածը մերկ, դողող, կիսաքաղց թափառում են փողոցներում, մեր գաղթականները, մեր գեղջուկ ժողովուրդը ոչինչ չունի իրենց և իրենց զավակների մերկությունը ծածկելու»<sup>17</sup>: Սակայն Ահարոնյանի և ազգային պատվիրակության՝ ամերիկահայությանն ուղղած կոչերն արձագանք չեն գտնում, և զինվորական առաքելությամբ Ամերիկա այցելած Անդրանիկը իր ծառայությունն է առաջարկում հանգանակությունը կազմակերպելու համար: Օգնությունը Հայաստան հասավ հիմնականում հագուստի տեսքով, որովհետև անգամ դրամով Հայաստանում հագուստ ճարելն անհնար էր<sup>18</sup>: Բայց օգնությունը չհասավ սպասելի չափերի և նշանակալի փոփոխություն չբերեց ոչ երկրի տնտեսության վերականգմանը, ոչ էլ որբանոցների կյանքում:

Որբախնամ գործում Հայաստանին իրական օգնություն ցույց տվեց և բազմահազար հայ մանուկների վերջնական կործանումից փրկեց Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն՝ Ամերկոմը: Ամերիկյան միսիոներական մասնախմբի արտասահմանյան քարտուղար Ջեյմս Բարթոնի և մեծահարուստ հումանիստ Քլիվլենդ Թաջի գլխավորությամբ ստեղծվում է մի կազմակերպություն, որը սկզբում կոչվում էր «Հայ նպաստի հանձնախումբ»: 1915 թ. նոյեմբերին «Պարսկական պատերազմի նպաստի հիմնադրամը», «Միրիայի և Պաղեստինի նպաստի հանձնախումբը» և «Հայ նպաստի հանձնախումբը» միանալով ստեղծում են նոր կազմակերպություն՝ «Հայ և Միրիայի, Ամերիկայի նպաստի հանձնախումբ» անունով: Կոնգրեսի որոշմամբ, այս հանձնախումբը վերջապես անվանվում է «Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստացույց», իսկ հետո՝ Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտե՝ Ամերկոմ:

1919 թ. փետրվարի 25-ին Ամերկոմի ներկայացուցիչ Հարիսոն Մեյնարդը Հայաստանից Նյու-Յորքի նույն ընկերության կենտրոնական գրասենյակի քարտուղար Չարլզ Վիքրիին ուղղած իր նամակում գրում է. «Մենյակի մեջ 13-17 երեխաներ տեսա և մի անկողնու մեջ 5 հոգի՝ միասին պառկած: Երբ հարցրեցի, թե ինչու են պառկած, բոլորի պատասխանը նույնն էր՝ հիվանդ եմ: Գուցե իրենց հիվանդությունը դանդաղ սովամահությունն էր... Մեր որբերի ուրախ դեմքերի, աղմուկ-աղաղակների փոխարեն՝ նրանց դեմքերի վրա կենդանություն չկար...: Մեզ համար պարզ էր, մենք պետք է հանձն առնենք բոլոր որբանոցները...»<sup>19</sup>: Հաշվի առնելով հանրապետության տնտեսական աղետալի վիճակը՝ Ամերկոմը առաջարկում է Հայաստանի կառավարությանն՝ իրենց կոմիտեին հանձնել կամ գաղթականների խնամքը, կամ որբանոցները: Այդ նույն ժամանակ Հայաստանում ապաստանած 15.000 և Վրաստանում 3.000 որբերի պահպանության համար Որբանոցային բաժանմունքը կառավարու-

<sup>17</sup> Արդարության ձայն, 20.XII.1919:

<sup>18</sup> Նույն տեղում, 15.I.1920:

<sup>19</sup> Ազատյան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անջելես, 1966, էջ 55-56:

թյանն է ներկայացնում տարեկան 120.000.000 ռուբլու նախահաշիվ, որի գումարը, հավանաբար, կկրկնապատկվեր, եթե փողոցներում եղած բոլոր որբերը հավաքվեին, իսկ նրանց թիվը, որոշ տվյալներով, հասնում էր 30.000-35.000-ի:

Նկատի առնելով որբ երեխաների խնամատարության համար անհրաժեշտ այդչափ մեծ բյուջեն՝ Նախարարների խորհուրդը նպատակահարմար է գտնում հանձնել որբանոցները: 1919 թ. մարտի 2-ի նիստում Նախարարների խորհուրդը համաձայնվում է Ամերկումի Երևանի ներկայացուցիչ, կապիտան Էլդիբի հետ կնքել համաձայնագիր՝ որբերի խնամքը կոմիտեին հանձնելու մասին<sup>20</sup>: 1919 թ. ապրիլի 12-ին ՀՀ խնամատարության և աշխատանքի նախարարը և Ամերկումի հայկական բաժանմունքը կազմում են համաձայնագիր, որով Ամերկումի հայկական բաժանմունքին է հանձնվում ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի սահմաններում գտնվող պետական և հասարակական կազմակերպությունների, որբանոցների, հիվանդանոցների և դեռ անապաստան մնացած որբերի խնամքն ու դաստիարակությունը՝ առանց որբերի թվի սահմանափակման:

Որբերի կրթության և դաստիարակության գործը տարվելու էր Հայաստանի հանրային կրթության նախարարության մշակած ծրագրով: Ամերկումը պարտավորվում էր խնամել և դաստիարակել որբերին այնքան ժամանակ, մինչև Հայաստանի կառավարությունը հնարավոր կհամարեր որբերի խնամքի և դաստիարակության գործը հանձնել որևէ այլ կազմակերպության: Հայաստանի կառավարությունը խնամատարության և աշխատանքի նախարարին վերապահում էր Ամերկումի որբանոցներում, ապաստարաններում, մանկական հիվանդանոցներում և առհասարակ, որբանոցային հաստատություններում որբերի խնամքի և դաստիարակության գործի կազմակերպման և ընթացքի բարոյական վերահսկողությունը, առանց, սակայն, միջամտելու Ամերկումի ներքին խնդիրներին և կարգապահությանը<sup>21</sup>: Հասարակական որբախնամ կազմակերպությունների ճրնշման տակ Հայաստանի կառավարությունը ցանկություն է հայտնում պայմանագրում մտցնել մի կետ, որով Մոսկվայի հայկական կոմիտեի, Կովկասի հայոց բարեգործական ընկերության և Եղբայրական օգնության կոմիտեի որբանոցների ներքին կառավարությունը մնալու էր նշված կազմակերպություններին, իսկ ծախսերը հոգալու էր Ամերկումը: Վերջինս մերժեց նրանց առաջարկը և պահանջեց բոլոր որբանոցների կատարյալ տնօրինում<sup>22</sup>:

1919 թ. մայիսի 1-ից Ամերկումին հանձնվեցին 90 որբանոց, 10 հիվանդանոց՝ 13.942 որբ երեխաներով<sup>23</sup>: Ադրբեջանի տարածքում գտնվող որբանոցներում կոմիտեն բավարարվել է միայն նյութական օժանդակություն ցույց տալով:

Որբանոցների համար անհրաժեշտ իրերը և դեղորայքը բերվում էին ԱՄՆ-ից, իսկ մնացած կարիքների համար կոմիտեն ծախսում էր

---

<sup>20</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 33, մաս 2-րդ, թ. 77:

<sup>21</sup> Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 94, թ. 14-15:

<sup>22</sup> Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 33, մաս 2-րդ, թ. 77:

<sup>23</sup> Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 84-89:

այնքան գումար, որ երեխաները գրեթե ոչնչի կարիք չունեին: Նրանք ապահովված էին լավ սննդով, հագուստով և բժշկական հսկողությամբ: «Կազաչի պոստի որբանոցները, ուր այժմ 5000 որբ է տեղավորված, ամերիկացիների հոգածության ամենամեծ առարկան են կազմում: Մանուկների մի գեղեցիկ և մաքուր քաղաք է դա, որն ունի իր առանձին հիվանդանոցը, շտեմարանները, երկաթուղին, փուռը, բաղնիքներն ու լվացարանները», - գրում է «Հառաջը»<sup>24</sup>: Մեկ այլ թերթում Էջմիածնի Ամերկումի որբանոցների մասին նշվում է. «2000 որբերի խնամքն ու կենցաղը շատ կանոնավոր է. օրական ամեն որբին՝ 1 \$ հաց, ճաշին՝ յուղեղեն կամ մսեղեն: Որբանոցների ընդհանուր կառավարիչը հոգ է տանում սաների մաքրությանն ու խնամքին»<sup>25</sup>:

Հասարակական որբախանամ կազմակերպությունների ներկայացուցիչները, սկզբունքորեն ընդունելով Ամերկումի օգնությունը, դեմ էին երկրի կարևորագույն խնդրի՝ պետության ապագա քաղաքացիների խնամքն ու դաստիարակությունը օտարերկրացիներին վստահելուն: Շատերի կարծիքով, դա պետության և հասարակության պատվի հարցն էր: Սակայն այն հանգամանքը, որ Ամերկումին հանձնելուց հետո որբ երեխաների գոնե ֆիզիկական գոյությունն ապահովված կլիներ, արդեն ուրախալի էր. «Մեզ համար ինչքան անհրաժեշտ է հայ սրտով երիտասարդներ, նույնքան և ավելի գործնական և աշխույժ քաղաքացիներ ունենալը»<sup>26</sup>:

## СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ РА И ВОПРОСЫ ОПЕКИ СИРОТСКИХ ПРИЮТОВ (1918-1920 гг.)

КИРАКОСЯН М. В.

### Резюме

После провозглашения независимости неблагоприятная внешнеполитическая ситуация Республики Армения отразилась на социально-экономическом положении страны. В наихудших условиях оказались сиротские приюты, находившиеся под патронажем государства. Исходя из создавшегося положения, правительство приняло предложение Америкома взять на себя опеку над армянскими сиротами, численность которых достигала 40.000. Все необходимое для нормальных условий жизни сирот (будь то лекарства, одежда, питание) поставлялось из США. Америком же своей деятельностью способствовал тому, чтобы обездоленные сироты ни в чем не нуждались.

<sup>24</sup> Հառաջ, 3.XII.1919:

<sup>25</sup> Հայաստանի ձայն, 18.XII.1919:

<sup>26</sup> Վան-Տոսո, 12.V.1919: